



## ՄՈՎՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՈՐԴԵՍ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԵՎ ՇԽԱՐԱՐ

17-րդ դարի առաջին 25 տարիները հայ հասարակական կյանքի համար թշվառության տարիները հանդիսացան: Օսման ցիների և պարսիկների մեջ մզկող պատերազմները հայաստանին ու Վրաստանին տիրապետելու նպատակով, որոնք մի քանի անգամ փոփոխական բազմով հաջորդեցին միմյանց, մեր երկիրը տնտեսապես քայլացին ու կազմալուծեցին:

Դավրիժեցին չափազանց մռայլ դույներով է նկարագրում մեր այս ժամանակաշրջանի կյանքը: Նրա նկարագրությունը չափազանցություն չէ, այլ պատերազմի դադիրի և սովոր հետևանքով առաջացած մի դրյամիճակ, որը իր հետ պիտի բերեր նաև հոգեոր ու մտավոր կյանքի ամուլություն:

Այս կապակցությամբ Դավրիժեցին գրում է. «Քանի մինչև ցայս վայր սովոր աւթեամբ խոպանացեալ և կորդացեալ է ազգու Հայոց, և ոչ միայն ոչ ընթեռնուին, այլ և ոչ զգիրս գիտէին, և ոչ զօրութիւնս գրոց. վասնով ամալիտանացեալ էր գիրքն յաշս մարդկան, և իրու Զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք լցեալ հողով և մոխրով, այլև ոչ դոյր ի ժամանակին յայնով անապատ և կամ գիտող կարտաց կրօնաւորական վարուց, վասն բազում հինգ թշնամեաց եկելոց ի վերայ և վրդովմանց և աւերանաց աշխարհիս Հայոց, ամեննեմն բնաջինջ եղեալ էր և բարձեալ նշոյլ և նշմարսն առաքինի դործոց և բարի կարգաց յաշխարհէս հայոց»<sup>1)</sup>:

Այս ընդհանուր ամայության և համատարած տջիտության մեջ հրապարակ են գալիս Սաղմոսավանքի Սարդիս եպիսկոպոսը և Տրապիզոնցի կիրակոս քահանան,

որոնք կազմակերպում են հայ գպրոցը Սյունիքում: Այս գպրոցը հայտնի է Սյունիաց անապատ անունով:

Դավրիժեցին այսպես է ընութագրում Տեր Կիրակոսին. «Անձածիր ընթեռնոյր դգիրս աստուածայինս և ի միտ առնոյր զպատկամս նոցա և ջանիւք և երկօք կըրթէր զանձն ըստ համանի գրոցն կւնցազագրի՛» (Դավրիժեցի, էջ 251):

Այս տրապիզոնցի քահանան գրուած յունաց վասն Սարդիս եպիսկոպոսի, թէ և նա զզացնալ է յաշխարհէ և կամի հրաժարի և հետուիլ առաքինի վարուց» (Դավրիժեցի էջ 251): Եվ ահա վանականությունը վերականգնելու և հայ եկեղեցին փըրկելու մտքերով վառված Տեր Կիրակոսը Տրապիզոնից դալիս է Սաղմոսավանք Սարդիսի եպիսկոպոսին տեսնելու և նրա հետ դործելու: Այդ ժամանակ եպիսկոպոսը մեկնել էր Երուսաղեմ: Տեր Կիրակոսը վերադառնում է Տրապիզոն, վաճառում իր ունեցած չանցածը և մեկնում Երուսաղեմ՝ Սարդիս եպիսկոպոսին գտնելու: «Վաճառեաց զամենայն ինչս իւր, զմանն ինչ ետ աղքատաց և զտունն և զանդատանն իւր աւանդեաց եկեղեցւոյն Տրապիզոնայ, և զմանն ինչ էառ ընդ իւր թոշակ ձանապարհին և ելեալ զնաց յիրուսաղէմ»:

Տեր Կիրակոսն ու Սարդիս եպիսկոպոսը Երուսաղեմում համաձայնության են գալիս և Սովոսն վարդապետի խորհրդով որոշում են Սյունիաց Երվում հիմնել իրենց դպրոցն ու անապատը: Վերագանձնալով Հայաստան, Բանահատի վանքի մոտերը նրանք հիմնում են Սյունիաց Մեծ անապատը. «Ի վերաբարի համբաւոյ նոցա եկին բազումք և յարեցան ի նորա և եղեն միարանք և բնա-

<sup>1)</sup> Դավրիժեցի, էջ 251.

կիշք տեղւոյն (Դավրիժեցի, էջ 253), ոչ  
միայն աշխարհականք և աննշանք, այլև  
եկեղեցականք և անուանի արք, վարդա-  
պետք, եպիսկոպոսք և քահանայք:

Սբունյաց Մեծ Անապատը հիմնվեց  
1610 թվականին. այս անապատի շինարա-  
րության մեջ իր գերի ունեցավ նաև Սյու-  
նեցի Մովսես վարդապետը:

Մովսեսը 15 տարեկան հասակում ձեռ-  
նարդվեց վարդապետ: Նա Սյունյաց երկրի Աճանան գավառի Խոտանան գյուղից էր: Իր կրթությունն սուացել էր Հայոնի Սրա-  
պիոն վարդապետի զպոցում: Սրապիոնը նկատելով Մովսեսի առաջադիմությունը և ձիրքերը կտակեց իր աշակերտ կեսարացի Գրիգոր վարդապետին հատուկ խնամք տա-  
նել նրա գաստիարակության վրա: Սրա-  
պիոնի մահից հետո 1606 թ. նա միաժա-  
մանակ մնաց Կեսարացու մոտ, հետո մեկ-  
նեց Երուսաղեմ և ահա այստեղ հանդիպեց Տեր Կիրակոսին և Սարգսի եպիսկոպոսին: Մովսեսը եղավ նրանց գաղափարի ոգևորի-  
չը, նա խորհուրդ տվեց անապատը բաց  
անել Սյունյաց երկրում, խոստանալով վե-  
րադառնալ և մասնակցել անապատի աշխա-  
տանքներին: Նա իր խոստումը կատարեց՝  
1615 թվին վերադարձավ և դարձավ Ան-  
պատի ամենաակտիվ գործիչներից մեկը:

Այս Մեծ Անապատը, որ հանդիսացավ  
վանական կյանքի վերակենդանացման սկիզ-  
բը, զեկավարում էր վեց հոգի: Տեր Կիրա-  
կոսը զեկավարում էր հոգեսր իշխանը,  
Սարգսի եպիսկոպոսը՝ գրադապատ էր անա-  
պատի ընդհանուր զեկավարությամբ և նրա  
տնտեսությունը ստեղծելով ու բարեկարգե-  
լով, Մովսես, Ներսես և Պողոս վարդա-  
պետները վարում էին անապատի կրթա-  
կան, դպրոցական կյանքը:

«Եւ էր հոգաբարձու ի մարմնաւոր  
կորմանէ անապատիս Սարգսի եպիսկոպոսն  
և գրոց ուսուցիչ տէր Կիրակոսն և Պօղոս  
վարդապետն: Մովսէս վարդապետն և  
Ներսէս վարդապետն և Թոումայ եպիսկո-  
պոսն, որք բազում ժամանակս կացին ի

միապին սորքա ամեննեցնենց (Դավրիժեցի,  
էջ 257):

Անապատական կյանքի վերակառուցման  
հիմքերը հետեւյալն էին՝ պահեցողություն,  
անընչափություն, սրբակեցություն, հը-  
նազանդություն, անխափան աստվածապաշ-  
տություն և Սուրբ Գրքի ընթերցմունք:

Ինչպես տեսնում ենք, անապատը վե-  
րականգնում էր նախ խախուված եկեղեցա-  
կան կարողը, ոտեղություն էր հոգեսրականից  
պատճանչվող վարքն ու բարքը և դրա հա-  
մապատաժիան կենցաղավրությունը և  
քանի որ այդ բոլորը առնչվում էին ամե-  
նից առաջ Ա. գրքի և եկեղեցական գրակա-  
նության հետ, հետեւապես վերականցնվում  
էին նաև դպրոցն ու դրականությունը:

Վերջին հանդամանքը՝ դպրոցի վերա-  
կանգնումն ու գրականության առաջ քաշ-  
վելը կարևոր է և չպիտի վրիպի մեր ու-  
շադրությունից: Անապատական շարժումը  
չափազանց մեծ և արգյունավետ եղավ հայ  
եկեղեցական կյանքում:

Սյունյաց Մեծ Անապատը պատրաստեց  
լուրջ կադրեր, որոնք հետզհետե ծավալին-  
ութիւնը հայատանի զանազան կողմերում նրա  
օրինակով հիմնեցին մի շարք անապատներ:

Անապատների թիվն սկսեց շատանալ: Այսպիսի՝ Ներսես վարդապետ Մովսէսին  
հիմնեց Լիմ անապատը, Կարապետ եպիս-  
կոպոսը՝ Սևանի անապատը, Արիստակես  
վարդապետը՝ Տանձաքարախի անապատը,  
Դավիթ եպիսկոպոսը՝ Չարեցագետի անա-  
պատը և այլն:

«Են և այլ ևս մանունք անապատք մի-  
նեալը այսոր և անդր, բայց մեք զնշանա-  
ւորսն յիշեսցուք, որ յայս մեծ անապատէն  
ուսեալ և վարժեալ գնացին յայլ տեղիս և  
հաստատեցին, որոց ամեննեցուն եղին սկիզ-  
բըն և պատճառ վերոյասացեալ երկոքին  
արքն, Սարգսի եպիսկոպոսն և Տէր Կիրա-  
կոսն (Դավրիժեցի, էջ 255):

Անապատների վերը հակիրճ կերպով  
այսպես է բնորոշում Դավրիժեցին. «Ական  
յընթերցմանէ և յուսուցանելոյ գրոց վե-  
րըստին նորոգել և յարդարել զամենայն

կարգս բարիս, անապատաց և վանորէլց և ժամանեղից» (Դավթիծհցի, էջ 255—256):

Անապատի սյունը, նրա փառքի և կանքի վերանորոգիչը հանդիսացավ Մյունցի Մովսես վարդապետը: Մովսեսը չկարողացավ անջատվել ժողովրդից և փակվել վանական սահմանափակ շրջանակում: Նա սիրեց իր ժողովրդին և սկսեց նրա կյանքի կազմակերպումը: Իր այս նպատակն իրագործելու համար նա սկսեց շրջել հայ գավառներն ու գյուղերը, եկեղեցիները բարեկարգել, դպրոցները բանալ և քարոզել: Կարճ ժամանակում նա դարձավ բոլորի սիրելին՝ նրա համբավը տարածվեց ամբողջ Հայաստանում և հեռավոր գաղթավայրերում ապաստանած հայկական բնիկունքն սկսեցին որոնել Սյունեցի խիզախ և հայրենաները վարդապետին: Նա գրեթե շրջեց Հայաստանի մեծ մասը. նա շրջում էր ոտքով, նրան հետևում էին նրա 15—20 առաջավոր աշխակերտները, որոնք իրենց մեջքերին տանում էին իրենց պարենը, անհրաժեշտ գրականությունը և այլն: Այս հուզիչ տեսարանը բարբռում էր հավատացյալ ժողովրդի գաւացումները և խանդաշառություն առաջ բերում: Մովսեսից առաջ նույն այս քարոզչական գործունեության էր նվիրվել նաև Պողոս վարդապետը: Եռանդուն և նվիրված վարդապետների գործունեությունը նախանձ առաջ բերեց վանականների մթնոլորտում: Վանականները և նույնիակ ժամանակի կաթողիկոս Մելքոնի սկսեցին հալածել նրանց, արգելել նրանց «լնարակար» քարողչությունը: Պողոս վարդապետն ստիպված առանձնացավ անապատում և այլևս դուրս չեկավ այնտեղից: Մովսես վարդապետը այլ ուղի ընտրեց: Տեսնելով որ անհնար է կաթողիկոսի հալածանքներից աղատվել, որոշեց հաստատվել Անանիա առաքալի անունով վանքում և շարունակել իր քարողությունները: Այսուղեղ նրա հռչակը հասավ իր դարձնականին 1619 թվին Մելքոնեթ կաթողիկոսը Մովսես վարդապետին ձեռնադրեց եպիսկոպոս: Կաթողիկոսը խոշոր գու-

ժարիներ հայլաքելու նպատակով որոշեց մյուսոնօքհնություն կատարել և հայտարարեց, որ մյուսոնը պիտի օրհնի Մովսես վարդապետը: Այսպիսով նա փորձում էր Մովսեսի հեղինակությունն ու ժողովրդականությունը ուղարկողութեալ: Մովսեսը մերժեց կաթողիկոսին, առարկելով, որ վարդապետը եկեղեցական օրենքների համաձայն չի կարող մյուսոն օրհնել, որ այդ վերապահված է եպիսկոպոսներին: Մելքոնի սեթը հարկադրվեց նրան եպիսկոպոսությունը ձեռնադրել և մյուսոնօքհնություն կատարել տալ:

Մովսեսի համբավը Սպահան հասավ: Սպահանի հայերը միջնորդություն հարուցեցին Մովսեսին որպես քարոզիչ Սպահան տեղափոխվելու. Մովսեսը գնաց և մրիթարեց օտարության մեջ գնդերող ժողովրդին, նա շրջեց Պարսկաստանի բոլոր հայրենակ գավառներն ու գյուղերը և կրկին վերապարձավ Երևան:

Հայոնի է, որ Մովսեսը Երուսաղեմում սովորել էր մոմագործության արհեստը: Նա եկեղեցու համար գեղեցիկ և ճնշմակ ու փայլուն մոմեր էր պատրաստում: 1623-ին պատահմամբ նա ծանոթանալով մի պարսիկ նշանավոր դիմուրականի հետ, իրեւ հարդաքի նշան, նրան մի քանի հատ մոմ տալոց: Այն ժամանակի համար մոմը նորություն էր: Պարսիկը հիացավ և հայոնց, որ այդ մոմերը տանելու է Շահ Արամին նվիր, քանի որ դրանից լավ բան չի կարող ճարել, դրանով կարող է հիացմունք պատճառել արքայից արքային: Այն ժամանակ Մովսեսը ամելացրեց մոմերի քանակը, խնդրերով իր հորդից էլ նվիր տանել: Պարսիկը մոմերն ուղարկեց Շահ Արամին: Շահն ամեն կերպ շահագործոված էր Պարսկաստանի առևտուն ու արդյունաբերությունը զարգացնելու և մոմերն ստանալուն պես հրամայեց Մովսես եպիսկոպոսին իր մոտ ուղարկել: Մովսեսը ներկայացավ Շահին 1624 թվին և Շահը կարգադրեց արհեստանոց բանալ և այդ արհեստը պարսիկներին սովորեցնել: Մովսեսն, ի-

հարկե, շահի հրամանը կատարեց : Շահը հարցրեց ջուղայեցիներին, թէ ինչով պեաքէ սպարզեատրել հռչակավոր եպիսկոպոսին : Մովսեսը, որ տարդած էր միայն Մայր Աթոռը բարսկարգելու և էջմիածիսը վերանորոգելու տեսներով, ջուղայեցիների միշտոցով հայտնեց, որ ինքը ցանկանում է Մայր Աթոռի լուսարարությունն առանալ : Շահը նրան նշանակեց Ս. էջմիածնի լուսարար : Շահի միջնորդությամբ կաթողիկոսը Մովսեսին դարձնում է Ս. էջմիածնի վանքի լուսարար : Մովսեսը ստանձնելով Ս. էջմիածնի լուսարարությունը իսկույս ձեռնարկեց վանքի վերաշինությանը և կարգավորմանը : Պատուեարգմներըց վանքը խիստ տուժել էր և քայլարիել, հարիկավոր էր այն կարգի բերել : Պաշտոնի անցնելու առաջին իսկ օրերից Մովսեսը ձեռնամուխ եղավ վանքի նորոգմանը : Մովսես վարդապետը էջմիածնի նորոգությունը ՚ավարի ժեցու ասելով սկսում է «ի թուականիս մերում ՌՀԶ և վարդապետի պահոց երկու շաբաթ աւուրն սկիզբն արարին շինութեան և նորոգութեան»<sup>1)</sup> , այլ իսուցով նորոգում սկսում է 1627 թվականի ամառը :

Որպեսզի փոքր ի չատե ծանոթանանք Մովսեսի կատարած շինարարության և Ս. էջմիածնի այն ժամանակվա վիճակի հետ, հարկավոր է մեջ բերել Դավիթիժեցու ներարգությունը . «Զի ամեննեիմբ ունայնացեալ էր ի ստացուածոց և կողոպատեալ փարզուց . «չ զիք, զի ոչ էր անդ ժամ ասել և կամ ընթերցումն և ոչ զգեստ և շուրջառ, զի ոչ էր ժամակարգութիւն և պատարագ, մինչ զի Քրիստոսի էջման տեղն և սուրբ սեղանն ևս ոչ ունէին ծածկոց, ոչ կանթեղեք, զի ոչ գոյր լոյս, այլ հանապաղ թ խաւարի, բայց այլ ազգի մահմեղական ոմն վառէր ղճրագ ձիթոյ և զնէր ի վերայ բեմին, և այն ևս երբեմն երբեմն, վասն անցաւոր ճանապարհորդաց, զի տեսանելով զայն զողորմութիւն արացեն նմա ոչ խնկարկութիւն, զի ոչ

զոյր բուրժառ և խունկ և սալարի յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ, եղեալ որջ զեռնոց և սողնոց և մեծամեծ լուսամուտքն, զորս ունի, ամենն ի բաց կայլ առանց վանդակի, ուստի մտեալ ի ներքոյ թրուշունք ըստին զեկեղեցին ծոսովք և ծղովք և այլ գտեխովք, զոր յամենայն առուր հարկիւ սրբէաք և ընդարձակ ընդ առաւտոն ի լուսանալն ճայնք թուչոցն իսպանէր զայնք ժամասելոյն :

«Իսկ յարտաքուստ կուսէ գլուխ կաթողիկէին և տանիքն ամենայն և երեսք որմոցն քանդքանդեալք և քարինքն թափեալք և որմոց յատակաց վէմքն փշմալ և ծակոտեալ : Եւ ի վաղեմի ժամանակաց, որ չուրջ զեկեղեցեաւն շինութիւն եղեալ էր, և դարձեալ աւերեալ և ի վերայ միմեանց վլուզեալ էր, և այնքան բարձրացեալ էր հողն և մոլիբն, որ յամենայն կողմանց շուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրացեալ էր աղբիւան և հողն եկեալ և ծածկեալ էր զիմեաւն և զատահմանո եկեղեցոյն, որք կան յարտաքուստ կողմանէ :

«Եւ ասացեալ բանքս, որք ի մէջն ցուցանեն զտեղին անբնակ գոլ ի ժարդկանէ . և ասեմ զիսկն, ոչ էր ամեննեին անբնակ, այլ գու համարեա իբրև զանբնակս, վասն զի կաթողիկոսունքն անդ յէջմիածին ոչ բնակէին, այլ յներեւան քաղաք ի կաթուղիկէ յեկեղեցւոջն, և կամ թէ ի շրջտղայութիւնս աշխարհաց, բայց սևագլուխք ոմանք սինելուրե և գուհէիկե որպան զեւղական հողագործս, որք վարնորդ մշակօք բնակէին յէջմիածին, և զարուրտ տարւոյն զրաղումն է զեղօրայն անցուցանէին, քան թէ յէջմիածինք<sup>2)</sup> :

Կուտակլած աղբն ու հողը, վլվածքները և այն վանքի միջից և շրջապատից մաքրելու համար բաց ևն թողնում գետի ջուրը, որը սրբում և տանում է ամեն ինչ : Ամեններ ի վեր հարյուրավոր բանց վորմեր են աշխատում և վերջապես հաջողական զայն մաքրել ու կանոնավորել : Այնուհետեւ վանքի շուրջը պարիսպ են քաշում :

1) Դավիթեցի, 309,

2) Դավիթեցի, էջ 303—305:

վանքը պարսպապատելուց հետո մինում են չյուրանոց, միաբանների համար խցեր և սեղանատուն, «փոնատուն, տնտեսատուն, համբարանոց ցորենոյ և այլ նիւթոց»<sup>1)</sup>:

Դամբիժեցու վերջին խոսքերից երեսում է, որ կառուցվել են հիմնական շնչեր և ժամանակի ճաշակով շնչեր: Մովկսեսի կառուցած այդ շնչերի մի մասը գեր մինչեւ այսօր կանուն է ու հիմքածնում:

Մովկսեսի աշխատանքները, սակայն, դրանով չմիշտացան և նա ձունամուխ եղավ նաև վանքի արտաքին և ներքին նորոգությանն ու բարեկարգությանը:

«Յետ այսորիկ զեկեղեցւոյ դմբեթի տանիքն նորոգեցին քանզի սալերն քանդակ և ի տեղույն ի բաց ոստեալ էին»<sup>2)</sup>:

Եվ այսուհետեւ «Համբար» նորոգման սրբոյ Աթոռոյս հոչակեալ ծաւալեցաւ ընդ ամենայն աշխարհ, ի Հոռոմաստան, ի Պարսկաստան, ի Քրդաստան, ի Վրաստան, և ամենեքեանք զուտրճացեալք ցնծալին»<sup>3)</sup>:

Կերանորոգչական այս աշխատանքներն սպարտելուց հետո Մովկսեսը ձեռնարկում է հոգեռը կադրեր պատրաստելու, եկեղեցական ծեսերն ու ժամակարգությունը վերականգնելու գործին: Այդ նպատակով նա Հոհանավանքում դպրոց է բաց անուն «կարգեաց դպրատուն ի մեծավառ. սուրբ ուխան Յօհանավանք, ուր ժողովեաց մանկունս յոլովս և զամենեցուն զծախոն և զպէտսն ինքն Հոգայր»: Այս դպրոցը տալիս է իր լավ արդյունքները, «որք եղեն ամենեքեանք արք պիտանիք և օգտակարք աշխարհի, վարդապետք, եղիսակոպոսք և աբեղայք և երիցունք և ամենայն վանուրայք, որք ամոյացեալք ի խաւարի կային, եղեն լցեալք միաբանօք, աբեղայիւք և կրօնաւորօք, և գեղօրայք վարժ երից ցամբքը»:

Դամբիժեցու այս խոսքերը, թէ «ամենայն վահորայք ամայացեալք ի խաւարի

կային», ցույց է տալիս շահաբասյան դարաշըանի ընդհանուր ավելրածության շափը. եթե էջմիածինը որպես կենորոնական Աթոռ, հասել էր այն դրության, որ մենք տեսանք, ընական է, թէ ինչ վիճակում կլինեն շրջաններում դտնվող վանքերը և եկեղեցիները: Այստեղից պիտի հետեւցնել, որ Մովկսեսի Հոհանավանքում բաց արածդպրոցը կոչված չէր միայն Մայր Աթոռին սպասարկելու, այլ ամբողջ Հայաստանին: Որ հիբավի այդ այդպես է, երեսում է Դամբիժեցու հետեւյալ խոսքերից. «ամենայն վանորայք եղեն լցեալք միաբանօք, աբեղայիւք և կրօնաւորօք»<sup>1)</sup>, իսկ դյուդերը— «վարժ երիցամբը»:

Իր նունդուն գործունեության հետեւանքով Մովկսեսը արադ կերպով ժողովրդականացալ և ճանաչվեց կաթողիկոսության միակ արժանավոր թեկնածուն: Այս կապակցությամբ Դամբիժեցին դրում է. «Գրովք և աղաչանօք թափանձէին յատենայն տեղեաց վարդապետք և ևսիսկոպոսք և երեւելի արք, զի յանձն առցէ զաստիճան կաթողիկոսության»: Մովկսեսը զիշում է այդ թափանձանքին և դառնում կաթողիկոս: Սակայն նրան Հարկավոր էին անհրաժեշտ նյութական միջոցներ, և այն էլ առան միջոցներ, որպեսզի նա իրականացներ իր միանրարական ծրագիրը, բայց Մայր Աթոռը չուներ: Ժողովուրդը նոր էր սկսել չունչ քաշել պատերազմի աղետից, նոր էին վերականգնվում ավերված դյուդերն ու քաղաքները: Այս հանգամանքը դժվարացնում էր Մովկսեսի գործը: Զնայած դրան, այնուամենայնիվ նա որոշում է դիմել ժողովորդի օգնության: Այս նպատակով նա նվիրակներ ուղարկեց ամեն կողմ Մայր Աթոռը պահպանելու և ծաղկեցնելու համար միջոցներ հավաքելու: «Եւ իբրև եղեւ կաթողիկոս, ունէր միաբանս և աշակերտս բաղումս և վասն նորոգութեան որբոյ էջմիածնի, որ նոր էր սկսեալ, առաջեաց դաշտակերտսն իւր ի նուիրակութիւն, զի

1) Դամբիժեցի էջ 306.

2) Նույն, էջ 306.

3) Նույն, էջ 307.

1) Նույն, էջ 307.

բերքեն ինչս յօժանդակութիւն նորոգման սուբր Աթոռոյն էջմիածնից : Մովսես կաթողիկոսը իր աշակերտներից մեկին Փիլիպպոս (վարդապետին) նվիրակ է ուղարկում օսմանյան բաժնի Հայաստանը՝ հրզերում, Բաղեշ, Վան և այլն և անհրաժեշտ նյութական աջակցություն ստանում սրանցից :

Մովսես կաթողիկոսը շարունակում է իր եռանդուն աշխատանքը ուշադրության կենարունում պարհելով դաստիարակության և եկեղեցական ներքին կարգության վերակենդանացներու խնդիրը, բայց դժբախտաբար նա երկար չապրեց : Նա վախճանվեց 1632 թ. մայիսի 13-ին Երևան քաղաքում Անանիա առաքյալի անվան վանքում : Նրա թաղումը եղավ չափաղանց հանդիսավոր : Նա թաղվեց կողեւու բլուրի վրա գոյուղու գերեզմանատանը :

Մեծ էր Մովսեսի հեղինակությունը . այն բղխում էր նրա բարոյական կենցաղից և նվիրվածությունից եկեղեցուն և հայրենիքին : Թեպես նա ընդամենը 12 տարի վարեց կաթողիկոսությունը, բայց կարողացավ մեծ գործ կատարել : Մայր Աթոռը իր շրջանակներով բարեկարգեց, վերանորոգեց և դարձրեց կենդանի օջախ, Աթոռու ազատեց պարունակությունը, չարաշահություններից և կողոպուտներից, կահավորեց վանքերն ու եկեղեցիները, սկզբու դրեց վանական դպրոցական կյանքին, որ խախտվել էր նախորդ տարիներում, և նա գնեց դրակ դրված եկեղեցական անտիթներն ու սպասները : Նա Մայր Աթոռու շուրջը համախմբեց աշխարհի բոլոր կողմերը սիռված հայերի ուշադրությունը, և նրանցից ստացավ ջերմ աջակցություն :

Մովսես կաթողիկոսի գործունեության գլխավոր էջմիածնի մեկն այն է, որ նա շատ

2) Փիլիպպոս վարդապետը Մովսես կաթողիկոսի աշակերտն էր, որին Մովսեսը ուղարկել էր Օսմանյան բաժնի Հայաստանը որպես էջմիածնի նվիրակ, Մովսեսի մահից հետո նրա թողած կտակի համաձայն աղքային ժողովը Փիլիպպոսին ընտրեց կաթողիկոս, թ. վ.

լուրջ ուշադրություն գարձրեց կաղքերի պատրաստման վրա : Նա ամենից առաջ որոնեց և գտավ խակական մարդը, վասհայրենասերը, ժողովրդին նվիրվածը : Նրա բոլոր աշակերտներն արդարացրին իրենց մեծ ուսուցչի հույսերը :

Պատահական երևույթ չէ այն հանգամանքը, որ երբ Մովսես կաթողիկոսը հիվանդ էր և նկատվում էր անողոք մահվան մոտենալը, նրան շրջապատեցին հայիսկոպոսը և վարդապետը և երևելի արք, նաև թահմաղղութիւ խանն և ողբալով ասացին, որպէս այլակէս հաճեցաւ վասն քո Տէրն և տուողն կենաց, զի մեկնիս և գնասի մէնչ, այլ արդ խնդրեմք ի հայրակնամ դժոյ քո, զի մի կարի թողուցուս դմէղ որբ, այլ յայտնեա մեղ, թէ զո՞վ ոք տառ մեղ լինի հայր և հովիւ զկնի քո և նա ասաց, դուք դիտէք, զով ոք և կամիքը, ընտրեցէք : Խոկ բամք ժողովոյն առացին, մեքը բոլոր աշխարհ զքեզ ընտրեցաք, և այժմ դու զով ոք և ընտրեսցես ընդունելի է մեղ, և նա ասաց : Ես դիմիսակոս վարդապետն կամիմ լինել փոխանորդ իմ և յաջորդ որբոյ Աթոռոյն էջմիածնի և նոքա ամենեքեան իրեն զայն լուսն, յօժար կամօք հաճեցան և ընկալան զՓիլիպպոսի լինել կաթուղիկոս<sup>2)</sup> :

Մովսես կաթողիկոսի ջանքերով հայ եկեղեցու նոր դարաշրջանն սկսվեց, զարթոնքի, վերաշխության և ինքնագնահակցության դարաշրջան : Այս վերածնունդը Մայր Աթոռում, որ սկսեց Մովսեսը և ժամանակ չունեցավ ավարտելու, նույնական փառակրությամբ, ոգեհրությամբ շարունակեց նրա հաջորդ և նրա հավատարիմ աշակերտ Փիլիպպոս կաթողիկոս Ալբակեցին :

#### Ո-ՈՒԱԾՆ Գ.Ա.ՐԴԱ.ՊԵՏ

1) Դավրիմեցի, էջ 325—326,